600.0015.30.06.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 1999 թվականի №15
քաղ. Երևան

Բնական գազի մատակարարման պայմանագրերի մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածի դ) ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442 հոդվածը, 552 հոդվածի 2-րդ ենթակետը, հաշվի առնելով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ում կառուցվածքային անավարտ բարեփոխումներով պայմանավորված՝ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ին մինչև 1999 թվականի հոկտեմբերի 1-ը գործողության ժամկետով տրված գազի բաշխման լիցենզիան և ելնելով սպառողներին հուսալի ու անվտանգ բնական գազի մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 9-ի N22 որոշմամբ հաստատված՝ սպառողներին (բաժանորդներին) բնական գազի մատակարարման (առքուվաճառքի) պայմանագրերը համարվում են հրապարակային պայմանագրեր:
2. Բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ին 1999 թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանում համարել բնական գազ մատակարարող պայմանագրային կողմ:
3. «Հայգազ» ՓԲԸ-ի հետ նախկինում կնքված պայմանագիր և սահմանված կարգով բնական գազ բաշխող ընկերության բաշխման ցանցերին

համապատասխան միացում ունեցող բոլոր սպառողներին (բաժանորդներին) 1999 թվականի հուլիսի 1-ից համարել «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ի հետ նշված պայմանագիրը կնքած՝ մինչև 1999 թվականի հոկտեմբերի 1-ը գործողության ժամկետով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ. Մովսեսյան**